ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Սավելի Բաբայանի «ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» թեմայով ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Կլաստերային համակարգը ժամանակակից «սմարթ» քաղաքաշինության ասպեկտներից մեկն է, որ իր կազմավորումը ստացավ 1971-2000 թթ. անցումային (տրանիզիշընլ) ժամանակաշրջանում: Այն մաթեմաթիկական եղանակներով հավասարակշռում է ճարտարապետության պատմականության, կայունության, գիտահետազոտականության կատարելագործման հարցերը, այդ թվում և՝ ինքնաբավ ագլոմերացիայի ստեղծումը, որի մերօրյա օրինակներից են՝ աշխարհագրական կլաստերը (օրինակ՝ Կալիֆորնիայի գինու կլաստերը, Նիդերլանդների ծաղկի կլաստերը), Սեկտորիալ կլաստերը (օրինակ սիլիկոնային հովիտը), հորիզոնական կլաստերը, ուղղահայաց կլաստերը և այլն:

Ատենախոսության հետազոտության առարկան՝ բնակավայրերի մունիցիպալ, ռեգիոնալ, ինչպես նաև միջազգային մակարդակներով, տնտեսավետ համագործակցության ստեղծումն է: Նշվածն այսօր երկրների ներուժի արդյունավետ պլանավորան և կառավարման անհետաձգելի անհրաժեշտություններից մեկն է, առանց որի տնտեսությունն անխուսափելի լճացման կենթարկվի:

Ատենախոսության նպատակն է բացահայտել «Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները»:

Գիտական խնդիրներն են՝

1. Վերլուծել կլաստերային մոդելի ձևավորման առանցքային դրույթները և գոյություն ունեցող միջազգային փորձը:

2. Վերհանել ՀՀ տարածքում, այդ թվում և Սյունիքի մարզում, կլաստերային մոդելի կիրառման նպատակահարմարությունը: Կատարել դրա նախադրյալների փաստագրավերլուծությունը:

3. Վերլուծել Սյունիքի մարզի համայնքներում կլաստերային մոդելի ներդրման հիմնական ուղղություններն ու բնակավայրերի ճարտարապետահատակագծային վերակազմակերպման դրույթները:

Ատենախոսության գիտահետազոտական մեթոդը «Քեյս ստադիզ»-ն է, որ կոորդինացնում է՝

1. պատմական, տեսական և պրակտիկ փորձի միկրոբազայի ստեղծումը.
2. թեմայի հետ կապված Հայաստանյան ռեսուրսների փաստագրավերլուծությունը. ինչպես նաև
3. նախորդ տվյալների խաչաձևման եղանակով Սյունիքի մարզի առանձնահատկությունների վերհանումը:

Ատենախոսությունում համապատասխանաբար շարադրված են թեմայի հետ առնչվող գրականության տեսությունը, փորձաքննության ասպեկտները և հանգամանալի ներկայացված են պաշտպանության տակ վերցրած տեսակետները:

Ատենախոսության նորույթը միանգամայն հստակ է ելնելով հեղինակի կողմից կատարված 13 հրատարակություններից: Պետք է ասել, որ առաջադրված հայեցակարգը մի քայլ առաջ է ՀՀ-ում 2002-2003 թթ մշակված տարաբնակեցման նախագծից, ներառյալ նաև 2006 թ., 2014-2015 թթ., 2017 թ., 2018 թ. գիտական զարգացումները և այլն: Փաստորեն ատենախոսությունում Սյունիքի օրինակով անցում է կատարվում հարցի նախադրյալների բնութագրումից դեպի կլաստերային ռեգիոնացման ասպեկտների ներդրմանը:

Ատենախոսությունը կազմված է նախաբանին հաջորդող 3 գլուխներից: Նախաբանը ընդամենը կազմում է 10 էջ, առաջին գլուխը՝ 38 էջ, երկրորդ գլուխը՝ 40 էջ, երրորդ գլուխը՝ 50 էջ: Ամեն մի գլուխ ունի իր ուրույն եզրակացությունը, անկախ

ատենախոսության ընդհանուր եզրակացությունից և առաջարկություններից, որոնք կազմում են ևս 3 էջ: Գրականության ցանկը ընդգրկում է տարբեր լեզուներով հրատարակված 115 գրքեր և հոդվածներ: Հավելվածում ներգրավված են 18 իլյուստրատիվ պլանշետներ: Աշխատությունը ընդամենը ներառում է՝ 126 էջ տեքստային մաս, 11 էջ գրականության ցանկ, ինչպես նաև 18 էջ իլյուստրատիվ աղյուսակներ: Բոլորը միասին կազմում են 162 էջ:

Առաջին՝ տեղեկատվական գլխում վերլուծվող ենթաթեմաներն են՝ Կլաստերային մոդելի պատմական զարգացումը և տեսությունը: Կլաստերների տիպերը և դրանց կիրառումը տարածքների ճարտարապետատարածական կազմակերպման գործընթացներում: Միջազգային զուգահեռների վերլուծությունը հանձինս՝ «Տոկիո-Բեյ», «Սիլիկոնային հովիտ» և զանազան այլ օրինակների:

Երկրորդ՝ փաստագրական գլխում վերլուծվող ենթաթեմաներն են՝ ՀՀ համայնքներում կլաստերային մոդելի տեղայնացման մեթոդաբանությունը և հիմնախնդիրները, հայեցակարգային նախագծերի վերլուծությունը, տարաբնակեցման խոշորացման ասպեկտները, «Աճի բևեռներ» մոդելը, կլաստերների տեղայնացման հետազոտությունը, չափորոշիչները, նախադրյալները. Ինչպես նաև Սյունիքի մարզի համայնքներում կլաստերային մոդելի տեղայնացման մեթոդաբանությունը:

Երրորդ՝ ուսումնահիրված տվյալների խաչաձևման գլխում ենթաթեմաներն են՝ Սյունիքի մարզում տեղայնացման առանձնահատկություններն ու հեռանկարները, կլաստերային համակարգի գերակա ուղղությունների ամրագրումը, դրանց թվում են՝ կլաստերային միջուկը, բնակելի կլաստերը, զբոսաշրջային կլաստերը ներառելով և՝ պատմաճարտարապետական ժառանգության պահպանության, վերօգտագործման, արդիականացման միջոցառումները: Արդյունաբերական կլաստերի մասով վերանայվել են շենքի տեսակի վերաօգտագործման, արդիականացման հարցերը, բազմամակարդակ սպասարկման և սոցիալական կլաստերը և այլն: Հաջորդաբար վերլուծվել են՝

ուսումնակրթական, հանրային տարածքների սպասարկման կլաստերը, ինչպես՝ էկոլոգիական միջոցառումները, կլաստերային պլանավորման համակարգի դերը երկրի և անվտանգ միջավայրի կազմակերպման գործընթացները, կլաստերային մոդելի ձևավորման փուլային ընթացքը, կլաստերի փորձարարական ներդրումը Սյունիքի համայնքներում և այլն:

Ընդհանուր եզրակացությունում և առաջարկություններում ներկայացվել է՝ Սյունիքի համայնքում կլաստերային մոդելի կիրառման և ճարտարապետատարածական կազմակերպման հետևյալ առանձնահատկությունները:

1. Ինքնաբավ և ինքնավար ճարտարապետահատկագծային կլաստերային մոդելի կիրառված լինելու առանձնահատկությունները:
2. Կլաստերի նպաստավոր և կոմպլիմանտեր մեթոդով ներդրվածության առանձնահատկությունը, որ ճկուն կապի մեջ է հին և նորարարական փոփոխությունների ու զարգացման ուղղությունների հետ:
3. Հույժ կարևոր է Սյունիքի մարզում կլաստերային տիպարային մոդելով ներկայացող փորձարարական առանձնահատկությունը և այլք:

Բարձր գնահատելով հանդերձ Լիլիթ Բաբայանի ընդդիմախոսվող ատենախոսությունը, ունեմ մեկ-երկու ներքոհիշյալ ցանկության կարգի դիտողությունները.

Դիտողություն 1. ցանկալի է, ատենախոսության շարադրանքում եղած թվային կարգով ներկայացված ակտային կամ կոդեքսային եղանակը վերափոխել միասնական շարադրանքի՝ առանց թվային համարակալումների:

Դիտողություն 2. Ինչպես աշխատության վերլուծությունները և եզրակացությունները ցույց են տալիս, որ կլաստերացումը Սյունիքի տարածքում տրադիցիոնալիստական՝ ժառանգորդական արմատներ ունի: Ի դեմս տարածքում եղած վանական համալիրների, Սյունիքը հայկական ճարտարապետության ամենավառ արտահայտված դպրոցներից

մեկն է: Միայն զբոսաշրջության համատեքստում այդ հուշարձանների հպանցիկ նշումը բավարար չէ (տես ատենախոսության 91-95 էջերը) : Եվ՝ տեքստի կերպարի, և՝ կլաստերիզացիայի ուղղությունների համար, ցանկալի էր տարածքի ճարտարապետական հուշարձանների հարստությունն ունենար ավելի հանգամանալի անդրադարձ, հատկապես որ դրանց գիտական ռեսուրսները տարածաքում բավականին հարուստ են, ինչպես օրինակ՝ Հ.Ղևոնդ Ալիշանի՝ Սիսականը (Վենետիկ 1893 թ), Ստ. Մնացականյանի՝ Սյունիքի ճարտարապետության միջնադարյան դպրոցը (Երևան 1960 թ.), Նուբար Պապուխյանի՝ Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը (Երևան, 1972 թ.), Մուրադ Հասրաթյանի՝ Սյունիքի XVII-XVIII դարերի վանքային համալիրները (Երևան, 1973), Սերո Խանզադյանի՝ Հայրենապատումը (Երևան,1-5, 1980-1988 թթ.), Պաոլո Կունեոյի և հեղինակային կազմի՝ հայկական ճարտարապետության հանրագիտարանիպ երկհատորյակը (Հռոմ, 1988, Սյունիքի մասին տես էջ 192-226), Rick Ney-ի TA Armenia արշավախմբի իրականացրած տարածքի զբոսաշրջացման դեստինացիաների հրապարակումը (Երևան, 2000 թ.) և այլն: Այստեղ խոսքը առանձնապես վերաբերում է, որ Սյունիքում զբոսաշրջության ուղղության համատեքստում անդրադարձ պետք է կատարվեր նաև գիտական տուրիզմին: Այսինքն, Սյունիքի հուշարձանների կարևորագույնները, գոնե հավելվածային կարգով արտացոլվեին, նշելով ամեն մի հուշարձանի վերափոխման սահմանները, որովհետև դրանցից ոչ բոլորն ունեն վերօգտագործման կամ արդիականացման գործառույթներ: Որքան էլ բիզնեսի և կայունության քաղաքականությունը գերակա են տվյալ ատենախոսությունում, այնուամենայնիվ պատմաճարտարապետական հուշարձանները բնակավայրերի տարածական տեղաբաշխման ցանցում նշանակալի տեղ պետք է գրավեր: Այն առանձին կետերով անդրադարձ ունենար և՝ գիտական խնդիրներում, և՝ ընդհանուր եզրակացություններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Սամվելի Բաբայանի *«Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի*

կիրառման ***ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները»*** թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում լուծված են տարածքային, քաղաքաշինական, ճարտարապետական կարևոր խնդիրներ: Ստացված լուծումները կարող են կիրառել կլաստերների նախագծման և շահագործման պրակտիկայում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 13 տպագիր աշխատանքներում:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ Լիլիթ Սամվելի Բաբայանը կայացած գիտական աշխատող է, ներկայացված «Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

ՀՃՇՀԱՀ-ի ՃՏՊՀՎ և Պ ամբիոնի պրոֆեսոր, Ճարտ.դոկտ. Դ.Գ.Քերթմենջյան

Պրոֆեսոր Դ.Գ. Քերթմենջյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար

Տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ.Հ.Լևոնյան

Երևան 16 Դեկտեմբեր 2022թ.